Էմիլ լիտտրէի նման երեւելի գիտնական և փիլիսոփայ անաստուածի այդպիսի յայտնի և հանդիսաւոր զղջման և դարձի մէջ կայ անշուշտ Աստուծոյ անսահման գթութեան ազդեցութիւնը։ Եւ Լիտտրէի դարձը թող լինի խորհրդաւոր և փրկարար օրինակ նորա նմանների համար։

* * *

---

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ.

Նկատ երեկոյ, ամէն ոք իւր տուն
Դիմէ քաղցրագէմ հետ իւր սիրելեացն,
Պանդուխտն ո՞ւր գնայ, առ ո՞վ մխիթարի,
Մահն յԱստուծոյ է, բաժանումն ուստի՞։
    Լուսինն ինձ ընկեր նոյն և մխիթար,
    Բայց նա էլ է գնում չունի ինչ դադար։
    Դշխոյդ գիշերոյ, կա՛ց, ա՛ռ իմ ողջոյն,
    Տա՛ր ու նուիրէ Հայրենեացս հողոյն.
Կա՛ց, լուսին մեղմիկ, մի՛ փախչիր արագ,
Ա՛ռ իմ հառաչանքս և սէրս քաղցրանուագ,
Տա՛ր իմ Հայրենեացս, սիրտ բարեկամաց,
Յայտնիր իմ փափագ խորին զգացմանցս։
    Որ քաղցրիկ տեսոյն կարօտով մաշիմ,
    Նորա զաւակունք հարազատք են իմ,
    Նոցա սուրբ սիրով այրիմ գէթ հրով,
    Իմ սրտի հրդեհն շիջանի ջրով.
Թէ յօտարութեան լինիմ ես արքայ,
Լաւ էր ինձ ասեմ Հայրենեացս շղթայ,
Թէ տան ինձ փառքեր մեծամեծ յարգանք,
Լաւ էր ինձ ասեմ Հայրենեացս տանջանք։
    Թէ ճոխ սեղաններ նստիմ պատրաստուած,
    Լաւ էր ինձ ասեմ կալ անդ միշտ քաղցած,
    Թէ պալատ շքեղ տան ինձ բնակել,
    Լաւ էր ինձ ասեմ ինձ անդ բանտարկել։
Թէ իմ անկողին կակուղ փետրալի՝
Լաւ էր ինձ ասեմ անդ գետնախշտի։
Թէ տան ինձ գինի, քաղցր օշարակներ,
Լաւ էր ինձ ասեմ Հայրենեացս ջրեր,
    Թէ միշտ ի զբօսանս երթամ ի հրճուել,
    Լաւ էր ինձ ասեմ անդ քրտինք թափել։
    Քանի հեռու եմ Հայրենեացս գրկէն
    Միշտ դժգոհութիւն կելնէ իմ բերնէն։

Թէ սիրտ բարեկամ ընկեր սիրելի
Այս օտար երկրում գտնելս յաջողի,
Ես լաւ ինձ ասեմ, սիրտս սփոփի,
Հազար բերկրանացս, ա՛հ զմին գտի.
Թէ գայ մի կռունկ բերէ ինձ մի գիր,
Որ ինձ աւետէ ձայնիւ բերկրալիր,
«Թէ քո Հայրենիք, համայն սիրելիք
Ողջ են և առողջ կենօք երջանիկ».
Կռունկն այն կոչեմ հրեշտակ Հայրենեաց,
Մխիթար սրտիս մտացս տխրագնեաց,
Բեռն նժդեհութեանս փոքր ինչ թեթեւի,
Կարօտոյս բոցեր փոքր ինչ շիջանի:
Սահիր, ով լուսին, ուղիղ ճանապարհ
Դէպ ի ցանկալի Հայաստան աշխարհ,
Վաղ երեկոյեան երբ ինձ երեւիս
Դատարկ չդառնաս, բեր ինձ աւետիս

Ս. ԳՆՈՒՆԻ

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ.

# ՀԱՆԴԷՍ

## ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

## Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

### ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

## ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ամսոյս 26-ին Ս. Էջմիածնում փառաւոր հանդիսիւ տօնուեցաւ Ազգիս մեծագործ Հայրապետի անուանակոչութեան տօնը Գէորգեան ճեմարանի Եօթներորդ Տարեդարձի հետ միասին: Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ Մաղթանքի ժամանակ թէ Միաբանութեան, թէ ճեմարանի սանուց եւ թէ Վաղարշապատի օրիորդաց դպրոցի ուսանողաց կողմից կարդացուեցան ուղերձներ, եւ ամենայն բազմութիւնը արժանացաւ Վեհ. Հայրապետի սուրբ օրհնութեանը:

Վեհափառ Հայրապետը Ս. Պատարագին եկեղեցի իջաւ չնայելով եղանակի խոնաւութեանը: Ս. Պատարագից յետոյ, զօր մա-